

րովար. ու թէ թղթէ սաղաւարտով ծիծաղաշարժ զօրավար, այլ արդեամբք զօրավար. փետրազարդ գլխարկով և սակնհիւս համազգեստիւ. յետոյ ընդհանուր հրամանատար Գաղղիական մեծ բանակի մը: Բարէ, եթէ կը տարակուսիս, բայց նոր ազգաց պատմութիւնը, և կը կարգաս խանդաղատանօք Հօշ զօրավարին մեծ և գեղեցիկ գործերը: Հօշ էր Ղաղարոսի ընտանեաց մականունն: Թաւելուք ըսել գովութեամբ թէ իրական, յաղթութեանց մէջ ալ մնաց այնչափ խոնարհամիտ և բարեսիրտ՝ որչափ իր տղայական հասակին յաղթութեանց ատեն՝ ՚ի Մոնղրէջ:

Օր մը զօրահանդիսի ժամանակ, երբ երազընթաց ձիւմը բանակին ճակատին

առջևէն կ'անցնէր, մտիկ պատուհանէ մը բարի պառաւ մի գորովայն կը դիտէր գեղեցիկ զօրագլուխը, ուրախութենէ և երկխղէ շնչասպառ՝ քսան տարի առաջուան պէս կրկնելով. « Տէր Աստուած իմ, Տէր Աստուած, հիմա պիտի իյնայ »:

Իսկ վէրսոյցի կշտամբող խոհակերն ալ հոն էր, սիրտը եղ կը կապէր հայրնեաց այնպիսի գիւցազն մը սալուն համար, զինքը շնորհաւորողներուն՝ ճնափառ սնով մը կ'ըսէր. « Չէք կրնար երևակայել, այս տղան մեծցրնելու համար ինչ քաշեցի. գխոցած եղէք, քաղաքայիք, որ վեց տարեկան եղած ատենը զեռ կերակրոյն փրփուրն առնել չէր գիտեր »:

ԷԻԵՔԻՐ ՄՕՐՈՑ

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱԽՃԱՆԵԱԼԻ 1883 ԱՄԻՆ

Շակգի. Երեւելի զօրավար Գաղղիացի. ծնեալ ՚ի 1823, վախճանեցաւ ՚ի 5 յունուարի: Փրանկ-Իրուսիական վերջին պատերազմին ատեն՝ Լուստոյ բանակին ճակատամարտից մէջ մեծ տնուն հանեց, մինչև նոյն իսկ յաղթողաց զարմանքն շարժեց:

Իլյասն կայսրոս, Եղբայր Գերմանիոյ կայսեր՝ եօթանասուն և երկու տարուան վախճանեցաւ ՚ի Պեռլին. յունուարի 21ին:

Կիւստաւ Տոռէ. գերահոշակ նկարահան Գաղղիացի. ծն. 1832, վիսճ. ՚ի 23 յունուարի. որոյ անունն՝ Տանդէի Աստուաճային Կատակերգութեան վէպը ՚ի նկարի հանելով՝ շատ հոշակուեցաւ. հրաշալի են դարձեալ իրեն պատկերազարդեալ Միլտոնն, Աստուաճաւոնն, և այլն:

Վակնէր Հախըարտ. անուանի երգահան Գերմանացի. ծնեալ ՚ի 1813, և վախճանեալ ՚ի 13 փետրուարի:

Կորչաքով (Ողեքսանդր Միքելովի). Ռուսաց մեծահանճար քաղաքագէտն. ծնեալ ՚ի 1798, վախճանեալ ՚ի 11 մարտի, 85 տարուան:

Փրեյերիկ փրանկիլուկոս Բ. Մերլեմպուրկ-Շվեյնի գուրն. մեռաւ ՚ի 15 ապրիլ: Ծանօթ են իւր գերահոշակ քաղաքործութիւնքն վերջին փրանկ-Իրուսիական պատերազմին մէջ:

Ժիւլ-Սանտոյ. ծնեալ ՚ի 1811. անուանի վիպասան Գաղղիացի և կաճառորդ Ակադեմիային. վախճանեալ ՚ի 24 ապրիլ: Անուանի են վիպասանութիւնքն Մատամ տը Սոմմերվիլ, Մարտոննա, Մազդայիկէ:

Առոտո վանկունչի. վախճանեալ յունիսի 9ին, 75 տարուան. Երեւելի պատմաբան Խաչացի. ունի Հիւս պատմութիւն Խաչիոյ, Պատմական և Բարոյական հրատմուցք ՚ի վերայ յատկուկան մատենադրութեան. և ուրիշ նշանաւոր գործեր:

Բալիկի փոխպարս. մեծահոգակ բժիշկ իտալացի. ծնեալ 'ի 1836 վախճանեալ յ⁹ յուլիսի:

Խարաչիք (Ելուշարդ). համբաւաւոր արեւելագէտ Անգղիացի. ծնեալ 'ի 1814. վիսն. 'ի 15 յուլիսի. շատերկասիրութիւններ թողուց Հնդկաց լեզուին և մատենագրութեան վրայ:

Շամպորի կումսկիամ Պորոտիի դուքսըն. վերջին ժառանգ Պուրպոնեանց ցեղին Գաղղիոյ. ծնեալ 'ի 1820, վախճանեալ 'ի 24 օգոստոսի:

Տոռուսոյան (էղմուսո), սպանեալ Սուտանի արշաւանաց ատեն, օգոստոսամուռն մէջ. բանասէր, բազմահմուտ անձն և ճանապարհորդ Ասիոյ գաւառներուն մէջ. 1877-78ին Օսմանեան-Ռուսական պատերազմին ատեն ալանատես եղաւ Փրքը-Ասիոյ և Հայաստանի մէջ տեղի ունեցած պատերազմայ. իւր թղթակցութիւնքն առանձին հատորով արժանացան տպագրուելու: Թուրքիէնէլ (Իսլան). համբաւաւոր վրպասան Ռուս. վախճանեալ 'ի 4 սեպտեմբերի:

Ֆրասարի (Գասպար). հոչակաւոր ճարտարապետ իտալացի. ծնեալ 'ի 1809. վախճանեալ 'ի 5 սեպտեմբերի: Պետրբուրգ երթալով և հասարակաց, առանձնականաց համար շատ շինուածներ շինեց. բայց իւր անուանի գործն է Պօլսոյ Յուստինիանեան՝ Այա-Սօֆիա հոյակապ տաճարին նորոգութիւնն:

Մէյն-թէյտ գնդապետ անգղիացի. վիսն. 'ի 22 հոկտ. 77 տարուան. բեղնաւոր հեղինակ պատմական ճանապարհորդութեանց, հոչակաւոր վրպասան:

Քուսիսան (Հնկրիկ). ողմախտ և դերազանց վրպասան Պելճիացի. ծնեալ 'ի 1812. վախճանեալ 'ի հոկտեմբերի. եօթանասուն հատորէ բաղկացեալ են իւր մատենագրութիւնքն:

Լուի Պլան. համբաւաւոր պատմա-

բան Գաղղիացի. վախճանեալ 72 տարուան, 7 դեկտեմբերի. իրեն զլուխ գործոց էր համարուին Տաւնաւանայ Պատմութիւն Գաղղիոյ, և Պատմութիւն Յեղափոխութեան Գաղղիոյ:

Լրկորման (Ֆրանչիսկոյ). ծնեալ 'ի 1835. վախճանեալ 'ի 10 դեկտեմբերի. հոչակաւոր հնագէտ:

Սոռէն Նիլսոն. շուեւոացի, բնագաւտումներուն Նեստորն. վիսն. 30 դեկտ. իննսուն և վեց տարուան:

Հանրի Մարթէն. մեծահամբաւ պատմաբան Գաղղիոյ. ծնեալ 1810, վախճանեալ 'ի դեկտեմբերի: Իւր գերազանց գործն է Պատմութիւն Գաղղիոյ, տասնուին հատոր:

Վիկտոր Տը Լաբրաւ. հոչակաւոր բանաստեղծ Գաղղիացի, կաճառորդ Գաղղիոյ Ակադեմիային. ծնեալ 'ի 1812 վախճանեալ 'ի դեկտեմբերի. տխուր սնով գրուած են իւր քերթողութիւնքն:

Կարլոս Լուչիոյի Բ. դուքս Լուքսայի և Բարմայի. ծնեալ 'ի 1800. էր որդի Սպանիոյ կարողութիւն 1849ին հրաժարեցաւ յաթոռէն, և վախճանեցաւ 84 տարուան:

Վէյոյիէս (Լուչոյիկ). իւնիվերսիտետային հրատարակողն. անուանի են իրեն գրուածներն, որք կ'ըսուին Հնովանայ ակնոյ ընդունելք, իտալական պիեսականց, Ազատախոնք, Արդի պատկերք և Փարիզոս հոտք:

Զիվիլիանի (Եմիլլոյ). անուանի բժիշկ իտալացի, ծնեալ 'ի 1813:

Փէրլն (Ճոն Բոյլիէ). գերազանց քրննաբան և բանասէր Անգղիացի. վախճանեալ 94 տարուան:

Պակնըրոգ ժիրանաւոր Գաղղիացի, վախճանեալ 83 տարուան. անուանի ճարտասան և բազմահմուտ գրիչ: Ինչպէս կ'երևի իւր զլուխ գործոց՝ իմաստասիրութիւն քրիստոնէութեան ըստած գրքէն: